

նութեամբ : Ըմբռնենք մեր մտաւորականին խեղճութիւնը , ճօխացնենք զայն : Ձեռք տանք տնտեսին , խեղճին , սովեալին , որբին . օգնութեան հասնինք կարող և տաղանդաւոր աղքատ համբախներու : Լոյս , զիտութիւն , արհեստ տարածենք ազգութեան գեղջուկ հասարակութեան մէջ :

Գործենք ու ապրինք ոչ մեր եսին այլ Ազգին համար :

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ



ԱՐՇԱԼՈՅՍ ԵՒ ԱՐԵՒԵԼՔ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

(շար. տես էջ 536, 1900)

ԺԱ.

Խըրտումն Հայոց որ ընդ իշխանութեամբ Հռովմայեցւոց : Քաղաքաւարութիւն սոցա եւ Տրդատայ :

ՊԱՌՆԱՆՔ հիմայ դիտել պահ մի՛ մեր երկրին չորս բոլորը , տեսնել լինչ վիճակի մէջ է աշխարհ . քրիստոնէութիւնն և քրիստոսամարտութիւնն : Յիշեցինք հռովմէական տէրութեան քառիշխանութիւնը , Գալերիոսի անդադար նկրտիւն և դրդելն զԴիոկղետիանոս , մանաւանդ յետ Նիկովիդիոյ պալատան կրակին , որոյ փոխանակ վրէժխնդրութեամբ՝ նոյն պալատան դիմաց քաղբին մեծ եկեղեցին լքողոշ բիշօ քրիստոնէիւք այրել տուաւ . զորս տարուէ տարի իբրեւ վկայս Քրիստոսի՝ տօնէ մեր եկեղեցիս : Ասոր վրայ լսելով մեր ազգին մեծ դիպուածը , սկսաւ դարձեալ դրդել խթել զԴիոկղետ . թէ , Հայք ապստամբեր են և վրտանդ է տէրութեանդ : Կարծեն ոմանք յիրաւի , թէ ոչ այս՝ այլ Ք Հայոց կողմերը քրիստոնէից շարժում մի եղած ըլլայ . զի և

(հարկ է գիտնալ) , որ թէ այդ նախնեգիտ մէջ թէ բոլոր Փաբր Ասիոյ՝ զրեթէ բնուկաց կէսն քրիստոնեայք էին , նախայիշեալ երկուրամեայ խաղաղութեան ատեն բազմացեալ : Անցողարար յիշենք նա և այս վերջի ըսածիս պատշաճ դէպք մի՛ այսպիսի քրիստոնէից և ոչ քրիստոնէից հակառակութեան , և նախատուութեան շատերու , որոց Վկայարանութիւնն շատ հետաքննական՝ կարծեմ անձանօթ է Լատինաց , թէ և մեր մեծ Վկայաւեր կաթողիկոսն ի յունարենէ թարգմաններ է գայն :

Մեկտինոյ սահմանները եփրատայ եզերքը Լաքսաւե անուամբ քաղաք մի յիշուի , ուր և կարծուի քրիստոնէից շարժումն . Գիոկղետիանոս իր հաւատարիմ պաշտօնէից մէկը կու խաւրէ անոնց դէմ , Լաւրենտ անուամբ , առանց գիտնալու թէ սա քրիստոնեայ է . զօրականք զարմանան Լաւրենտի անտնայուն քրիստոնէից վրայ յարձակելու . կ'իմանան իր քրիստոնէութիւնը , և իր յորդորանք՝ տեղէ տեղ՝ մանաւանդ լեռնոտ կողմեր փութադրուին , երբեմն պատերազմելով 2000 հոգի ջարդեն ի հեթանոսաց , (որոց առաջնորդ խաւրուի Ագրիպպաս ուն , երբ կ'իմացուի Լաւրենտի քրիստոնէութիւնն) . երբեմն այլ 5 կամ 600 հոգի . բայց յետոյ չեն ուզեր կուրի , և նման Այրարատեան վկայից 9 կամ 10000 անձինք մարտիրոսանան . Լաւրենտի այլ յայտնութիւն կ'ըլլայ յԱստուծոյ , թէ , « կատարելոց են ի կողմանս Հայոց » : Ի պատմութեանն կ'ըսուի , թէ փախչէին « մինչեւ ի սահմանս Հայոց՝ ի Մեկտինի քաղաք մեծ » : Յետ այլեւայլ դիպաց՝ Ագրիպպաս այլ հաւատայ ի Քրիստոս և նախատակուի ի Գովմատայ , զոր իրեն տեղ խաւրեր էր կայսրն . իսկ զԼաւրենտ՝ կապած զրկեն ի Հռովմ , ուր նախատակուի : Այս մանրամասն Վկայաբանութիւնը , յորում շատ տշխարհագրական հետաքննելի տեղեաց անուանք կան , զիբեր է ականատես և գործակից մէկն , Զենոփ առնումք , որ Գովմատայ բանակին մէջ է եղեր , և ինքն զլիսատեր է զԱգրիպպաս . բայց յետոյ ինքն այլ հաւատացեր է ի Քրիստոս , և իր պատմածներուն հաւասարներ է նախատակութեամբ : Գրեթէ անտարակոյս է այս զուեղագունդ զօրական վկայից մէջ շատ կամ քիչ Հայոց գտուիլն :

Ժամանակիս կայսերաց պատմութեան հին
և նոր՝ զորոք՝ յիշեն՝ առանց պիպուկածոյ պաշ-
տօնականը զիտանալու, որ այս ատեն խլրտում
մի եղած է, ըստ ոմանց՝ ի սահման չայոց,
և ըստ այլոց՝ ի Մելիտինէ՝²։ որոյ հետխառ
նուկով ի Մեծ չայս եղած անակնկալ կրօ-
նական յեղափոխութիւնն, անդադար փշմամբ
Գալերիոսի՝ կամաց կամաց բորբոքի Գիտ-
կեանքանոս, և մինչ Տրդատ և Գրիգոր բրն-
տնէութիւնը հաստատելու հնարք հարէին,
կայսերք ի Նիկիոսիքիս (որ այն ատեն հանդի-
պեցաւ և Կոստանդիանոս կեսար), մտածէին
հնարք մարելու կամ նուաճելու դերիստո-
նէութիւնն, և իրենց քաջագործութեանց յաղ-
թական հանգէս կատարէին իրենց այրած
ղիւթներով յայնչ դասով բողոքողի դաս
ընդմիջում անել, ամբիջոյց ի միջոցոյ
որոյ ի նոր զորոյս յիշեմք զՅելէր և զՄէհէր՝
2. Յիշեալ և յիշելի նահատակաց ոմանց
Վկայաբանութեանց մէջ՝ զոր հարք մեր
Թարգմաներ և կարգեր են ի ճառքնախնայ, զը-
տուի յիշատակը այս խլրտման չայոց, ինչ-
պէս ի Վկայաբ. Ս. Ե. գեներալի, Վաղերիոսի,
և այլն. « Համբաւ եհաս ի լսելիս Թագաւո-
ւոցն՝ ի դատաւորաց Արեւելից քաղաքացն,
« զիեալ ամբաստանութեան նամակ եթէ, Կապ-
« ալաղովիա և առեւանջ Կողմանք չայոց Մե-
« ժաց՝ հակառակ կացին հրամանաց ձերոց,
« զխորհրդական տօնս աստուածացն ոչ կատա-
« րեն, և ոչ ի նուիրական զսհից նոցա ճաշա-
« կելով։ Իբրեւ լուան զայս Թագաւորքն՝ վաղ-
« վաղակի փոխեցին զիշխանս քաւառացն այ-
« նոցիկ՝ մեծաւ ցասմամբ զայրացեալ նոցա,
« վատչուէրս և անպիտան զնոսս համարելով,
« և առաքեցին փոխանակ նոցա արս երկուս
« հելլենացիս ազգաւ և կրօնիւք, անուն միումն
« Լիւսիաս և երկրորդն Ագրիկոլայոս, վայ-
« րենամիտս և զազանաբարոսս և խորագէտս
« և հանճարեղն։ Եկին այնուհետեւ (մասն
« նիւք) ի քաղաքն Սատաղացոց՝ որոյ նստէր
« զուքոն Լիւսիաս և պատմեցին վասն երա-
« նելոյն Վաղերիոսի և Կանգիտոսի և Ալիւ-
« զասայ և Եւգինիոսի, որ էր ի քաղաքէն Տրա-
« պիդնատացոց, այլ և բազումք ի բրիտոս-
« նէից՝ վասն արձաթիւրութեան աստին՝ նմա-
« նեալք Յուդայի, գնացեալ ի քաղաքն Սատա-
« ղացոց, հանդիպէին զնուորացն Կոմենտա-
« րիոսին (Commendator) որ էր զօրագլուխ
« զասոն։ Անոր նման կ'ըսէ և Ս. Եւստոնտիոս
« տեանց վկայագիրն. « Ի սոյն իսկ ժամանակի

տրքունեաց վրայ (յամսոն, 302), և այս
աւելի մեծահանգէս ի Հոռով, ի յիշատակ
քանանայ ինքնակալութեան Գիտկեանա-
նոսի՝ իր Խթոսիկց Մաքսիմիանոս օգոստոսի
հետ (20 նոյեմբ. 303), շատառեածական ա-
նուններ անելով վրանին, Արամաղդ և Հե-
րակէս (մինչ Տրդատ նորահունք՝ խոնար-
հաբար կ'ուղէր Յովնանեւ կոչուել, և այն
Բրիտոսի հեղ սննդակցին նուրիւր հոգաւա-
ւոր Բագրեւանդայ տաճարը, որ ուրիշ մի
ընդարձակուած՝ մինչեւ հիմայ կանգուն՝ քա-
րոզէ իր գործը)։ Իսկ Գիտկեանոսեանց
յաղթանակն ուր մնայ։ Անոր չքոտած շու-
քով շուցած՝ և Մաքսիմիանոսի թելադրու-
թեամբը՝ զրդուած՝ երբ դարձաւ ի Նիկիոս
այս յալմանչաւ ի Դոմիտիոս մանուկայ
զորոյցոյ մասն զս քաւառի բոլոր մասն
« համբաւ իմե հասանէր ի լսելիս անորէն իշ-
« լանին, իբրեւ թէ առեւանջ աշխարհն չայոս,
« տանեալց և Կապալաղովիա՝ ընդդիմաբար
« եղեն Թագաւորական հրամանին, և միաբա-
« նութեամբ յայտատարոյն իմն թեւակո-
« խեն, և զինքն ալով բրիտանեական հաւա-
« տոցն՝ անփոփոխ ունելով զմիտս իւրեանց ի
« Յիսուս ան, զոր և Առտուած քարոզեն Զայ-
« սոսիկ լուեալ կայսրն Գիտկեանոսն՝ խոռ-
« վեցաւ ի սրտի իւրում. և սրտմտալ ցաս-
« մամբ մեծաւ՝ վարանէր հեծութեամբ առ-
« լեալ և նոյնժամայն հրամայէր զամենայն
« մեծամեծս իւր առ ինքն կուլել, հանդերձ ի
« մաստնոքն Հելլենացոց, և զերիս անորս
« յառաւօտէ մինչեւ ցերեկոյ՝ հանդերձ իմաստ-
« նօքն Հելլենացոց՝ ի խորհուրդս մտեալ՝
« հաստատէին ի միտս իւրեանց, փոխադրել
« զկողմնակալսն զայնոսիկ՝ որք կարգեալ էին
« ի վերայ երկաքանիւրոց ազգացն այնոցիկ,
« վատչուէրս և անարիս զնոսս կարգալով. և
« փոխանակ նոցա առաքեաց երկուս՝ որք ե-
« կեալ էին ի Հելլենացոց քաւառէն, յոյժ
« իմաստունք և վարժք և կիրթք ամենայն հոռ-
« տորական և փիլոսոփայական հանճարոյն, և
« խոհեմք խորագիտութեամբ քան զամենայն
« ցիւղիղեացացն, որ մին ի նոցանէ Լիւսիաս
« ճանաչելի, որ զամենայն Զեմեւագոց զա-
«ւառին ունէր դեռական իշխանութիւնն. և
« երկրորդն որ կուլէր Ագրիկոլայոս, որոյ դա-
« մենայն աշխարհաց զքաւառական իշխա-
« նութիւնն ընձեռեալ էր և զգինսւորութիւն
« մամենայն գնդիցն որ ի մեքերկայսն և ի մեր-
« ձակայ քաւառոն բնակեալ էին »։

միջին, ի սկիզբն 303 տարւոյ (23 փերր) որ օր՝ ըստ իրենց սնտոսի պաշտամանց, ան էր Սաւմանաց (Terminalia), հրաատարակեց զՀալածանս քրիստոնէից, շատ յարմար (ըստ ոչ կամաց նոցա) մեր հայրենեաց սահմանակցութեան վրայ հանգիպածին որոյ շշուկն երթալով զօրանար, և նոյն իսկ օգտաւոր տալիս հանգիսից ատեն՝ հասաւ անոնց լուր, եթէ « Սմենայն աշխարհն Հայոց և Կապպադոքիա ընդդէմ անօրէն հրամանաց գործեն » :

Փութացան կասկածոտ կայսերքն զինուորական զօրութեամբ երկու սահմանակալ խաւերէ այն կողմերը մէկն՝ յանուն Հայոց երկրի, միւսն Կապպադոքիոյ : Առաջինն էր չարանունն Լիսիս², ի սահմանակալ քաղաքն Հայոց Սատաղ, որ շատ և հաշակաւոր Սուրբեր նահատակած է, յորոց զմանս յիշենք յետոյ երկրորդն՝ Ալքիկոլայոս ի Սեբաստիա : Հալածչաց կառածն կայծակի պէս սկսաւ արծարծիլ և երբ մէկ աղնուական քրիստոնեայ մի հօն ի Նիկիոյից զովիկի հաւատքով այլ ոչ խոհեմութեամբ յանդգնեցաւ հրապարակի մէջ պատուել հալածանաց հրովարտակն, որոյ համար և նահատակեցաւ, առաջ թմրածն և կակուղ Գիոկղ, հեռոգհետէ մի քան զմի սաստիկ հրովարտակներ հրատարակեց, որոց չորրորդն ի սկիզբն 304 տարւոյ, որ զօրաւոր համարուի քան զամենայն հրամանս հալածանաց, ամենէն ընդարձակ և ամենէն շատ արիւն թափող Ս. վկայից՝ որով Գիոկղետի անունն այլ քան զամենայն հալածչաց ատելի և անիծելի եղաւ այս թերեւս նուազ կ'ըլլար, եթէ կանխեր նա և ինչպէս խոստացեր էր՝ իր քսանամեկին լրացած ատեն հրաժարէր յինքնակալութենէն. բայց տարիէ մ'աւելի տնտնաւով, մտքով և մարմնով այլ տկարանալով իր իշխանակցացն՝ մանաւանդ Գալերիոսի՝ ղաւաճանութենէն վախնալով, վերջապէս թողուց թագը (305 մայիս 1) և փութացաւ դառնալ իր հայրիկ

նիքը ի Սաւոն քաղաք Գաղմատիոյ, իր պապական պարտիզին մէջ բանջարներ մշակելու, ուր օր և մեռաւ (313) անշուշտ Կոնստանդինոսի քրիստոնէութեան ազատութեան հրովարտակն՝ իր չորս հրովարտակաց դէմ կայծակ մ'եղաւ սրտին, որ եթէ իր նստջին գգոյշ և հաւաւոր կերպով վարուէր, փոխանակ իր ջախջախիչ քան աշակից ընկերներ աւելցնելու, դուցէ (մարդկօրէն մտածմամբ) ինքն ըլլար Կոնստանդինոսի գործը կատարող և փութք ժառանգողն : Իր այդպէս անապան հրաժարին յաշխարհալուր գործոց համարձակ ասպարէզ քացաւ Գալերիոսի, որ օրէ օր սպասէր, և անուանեց զինքն անոր տեղ Ինքնակալ օգոստոս, իրեն արեւանուոր փոխանորդ կեաւր մ'այլ կանգնեց, իր քեռորդին Մաքսիմիանոս, Daza անուանեալ, որ տանադարձութեամբ այլ յարմար է Գաւառն կոչուելու՝ ըստ մեզ, զոր և գործովքն հաստատեց արուեստիւ ինքն այլ քեռուոյն պէս տաւարարած ըլլալով և քան զայն անմիտ, անախտ, և ասկ փառասէր. որ և տառնց սպասելու ժամանակի և կարգի, բացարձակ իշխանութեամբ վարուէր, անուան վրան այլ աւելցնելով Jovius, արամագրաւ կան, չափազանց մակդիրը (որ ըստ մեր լեզուի յարմարի իր բնիկ արուեստին Հովիւ) : Իսկ երբ քեռին (Գալերիոս) վերցուեցաւ յասպարիդէն և ի կենաց (1 մայիս, 311) այնուհետեւ առանց ինչ տկնածութեան հաշակեց զինքն Ինքնակալ, և իրեն վիճակած երկրի կողմանց վրայ աւելցուց յափշտակութեամբ և զՓոքր Ասիա, ուր յետոյ տեսնենք իր արժանաւոր թագն ընդունիլը Տրդատայ արդարակշիռ և կորովի թաթով :

Անտարակոյս է որ սա լսելով և տեսնելով Հռովմայեցոց տէրութեան խառնակութիւնը և խայտառակութիւնը մանաւանդ յետ հրաժարման իր հին երախտաւոր և երախտապարտ բարեկամին՝ Գիոկղի՝ ինքնին լուծուած համարէր անոնց հետ գործակցութիւնը, և

1. Omnis Armeniorum regio et Cappadocum facit praeter improbum eorum decretum. — Սուրբոս ի վարս Ս. Հիերոնիմայ, 7 նոյեմբ 303, Hunziker von Bern. 275 :

2. Իբր, 20 տարե առաջ յիշուի Լիսիս քաղաքը կողմակալ կամ (praeses) Լիսիս նահանգի, ուր նահատակեց զՍ. Աստերիոս :

երջանիկ՝ իր աշխարհը, որ ձիւղ յարմար
ժամանակին մագաղուրծ եղաւ և հաստա-
տուեցաւ ի նոր կրօն և ի նոր կեանս։ Արգա-
րեւ առանց մեծ որոտառութեան և որոմտու-
թեան չէր կրցնար նայիլ Տրդատ գէպ յարեւ-
մուտս իր երկրին, ուր՝ այդպիսի ինքնակոչ
ինքնակալ մի և իրեն համառիտ համահայ
գտած Լիկիկնուն (Լիկիկանու, որոյ որբեմն
օգնեւր էր ինքն Տրդատ և ի կենաց վտանգե-
ադատեր), անգութ և անօրէն նեղէին մաշէին
գգրիտօոնեայ, բայց իր հափառութիւնն,
և յարեւելից՝ ի Պարսից, և ի հիւսիսոյ՝ ի
Ալովկատեանց, յարձակման կասկածք՝ սուի-
պէին զինքն զգուշութեամբ վարուիլ, իր տե-
րութեան որոշեալ սահմանաց վրայ հսկել,
այլ կոխելով անդին չանցնիլ, որ չվտանգէ
իր աշխարհին քաղաքական և կրօնական խա-
ղաղութիւնը, որ էր պտուղ շնորհացն Աստու-
ծոյ և իր քաջութեան և խոհեմութեան։ Այն
զգուշութիւնը նկատելով և կեսարքն և իրենց
կուսակալք՝ Ախախաք և Ագրիկողայոսք, ի-
րենք այլ չէին համարձակիր կոխել Տրդատայ
սահմանները, թէ և կերողով մի սպասամբ
համարէին զնա իրենց տիեզերական իշխա-
նութենէն, և մերժող իրենց հրատարակած
հրովարտականքուն։ Վերոյիշեալ սրբապիւր
հեղինակն յայտնապէս կրկնէ առաջի քսածը՝
թէ, « Բովանդակ Մեծ Հայք և Ապագայադու-
կիա՝ մերժեցին անոնց հրովարտակը » կամ
ընդդիմացան։ Իրրեւ երկու հզօր գաղափք դէմ
առ դէմ գլխակելով՝ մրմուռային երկար տոնն,
Թագաւորն Հայոց և Կեսարքն Հռոմոց, մին-
չեւ որ յանկարծ ասոնց կողմէն եղաւ յար-
ձակողն, մերօնց կողմանէ՝ հալածողին հա-
լածողն, ինչպէս տեսնենք քիչ յետոյ։

Գրեթե ամբողջությամբ լրացված է (մոտ 90%)
 և համարվում է լավագույնը (մոտ 95%)

ՀԱՅԿԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԺԲ-ՆԵՐ ԳԻՆՆ ԽՈՒՐԱՆ
ՄԱՍԻՆ ԽՈՒՐԱՆԻ ԴԱՐՈՒՄԻՆԻՔԻ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՒՐԱՆ

Եւփատակք ք Փոքր Հայս :

Վերադի, հիմայ մեզ այլ ժամ մի թողլով
մեր խաղաղացեալ բնաշխարհը, դառնալ նայիլ
անոր խռովեալ և ժփեալ շուրջը՝ հալածանաց

4. Tota Magna Armenia et Cappadocia il-

lorum edicta repugnarunt. — *Uaphtu*: 1849

հովերէն, և սուրբ վկայից անպարտ արեամբ ներկեալ, յորոց անստորակոյն է որ ոչ ամա կաւք և ազգու Հայ էին, մանաւանդ մեր ձաւորքն կամ սահմանակիցք փաքր և Մեծ Հայոց, — Յիշեցինք որ անոնց սահմանա կալ կամ միջասահման նշանաւոր և ամբար քարաք մ'էր Սատաղ, Բաբեր Հայոց և Եփրատայ արեւմտակողմն ուր և տքըռնի ճա նապարհաց անցք և կայանք ըլլալով Հոգի մայեցիք ամրացուցեր էին պայն, և իրենց իշխանութեան ներքեւ էր որպէս երբեմն մեր աշխարհակալ Արշակունիաց, որք և ի Յու նաստանէ կողոպտած չափաւորածոց արձան ներէն՝ այս տեղ այլ կանգնած էին՝ որպէս ի մերձաւոր բնիկ Եկեղեցաց գաւառին, և հօն մեր օրերում գտնուեցաւ հողի տակ՝ Անահ տաղ կամ Արտեմեայ պղնձէ անդրոյ մի գլուխ և ձեռք, յունական արուեստաւ սքանչելի նոր բութեամբ, որ հիմայ Լոնտոնի թանգարանին զարմանաշարժ զարդ և գանձ են, ո՛ր գիտէ թէ Տրդատայ աջն և Լուսաւորչի խաչն Ջարշ դած չըլլայ այն բնականի կրկին մեծութեամբ գիցուհին, որոյ կոտորքն հազարաւոր ան գլխական սկզովք գնուեցան։ Արդ, այս հա յասահման քաղքէն բնմայրեցան հալածա նաց կրկին սաստիութեան ժամանակ (307ին), Եօթն եղբարք, հաւանորէն բնկերք՝ հայրենի հողէն և ոչ մի մօր ծոյց, որոյ ոմանց ա նուանքն հնչեն իսկ Հայերէն, ինչպէս Փաւ նակ, և զխաւորն զոր Յոյնք ՕՐԵՆՏԻՍ գրեն նոյնպէս և Լատինք, հայ ականջն Հրանտ լսէ, մէկն ալ Էրոյց գրուած՝ Սրայի կամ Հօրոյ անունները յիշեցնէ։ միւսքն օտարաձայնք փիթիկ, փիթոն, կիրակոս, Լեւգիկոս, եօթն այլ գննութեամբ հռոմէական գընդից մէջ։ Ժամանակն և կայսրն՝ բիշ մի այլապէն Յու նաց և Լատինաց Յայսմաւորք, մերինն լսէ։ Ըստ ոմանց՝ դեռ Դիոկղետի հրաժարելէ աւ աջ, բայց աւելի ստոյգ՝ վերոյնշանակեալ տարին եղած է ասոնց գլխաւոր գործն օտար երկրի մէջ, յարեւելակողմն Եւրոպիոյ՝ ուր՝ ի հիւսիսոյ՝ Ռուպատանի կողմերէն արշաւեր էին բարբարոսք (Սկիւթացիք կամ Սկլաւք), և մեր պատմաց՝ Տրդատայ և Հռէի վրայ պատմածին նման՝ բարբարոսաց թագաւորն ուզեր է կայսրն հետ մենամարտիլ, որոյ տեղ Հրանտն ելեր և յաղթահարեր է զնա, կայսրն

շնորհապարտ՝ մեծ պատիւ տուեր է յաղթողին. բայց իմանալով անոր կրօնքը և չկարենալով ուրաքանչեւ, վեց ընկերօքն աքսորեր է յարեւելոյ, ոչ հեռի իրենց հայրենիքէն, բայց զանազան կողմեր. և անդադար քշելով և նեղացընելով, մինչեւ բնական կամ բանի մահուամբ վախճաներ են. Հրանտն այլ ի Տրապիզոն ասորեր և նախատակեր են, ի ծով ձգելով: Ասոնց յիշատակն կատարուի ի 24 յունիսի. Յոյնք ուրիշ Որենտ կամ Հրանտ մի եւս յիշեն յ'3 նոյն յունիս ամսոյ:

Գրեթէ նոյն տարին (306) և մօտ Հրանտի նախատակութեան տեղւոյն, նախատակուած է՝ մեր եկեղեցւոյ այլ ծանօթ և Մեծ Պաշտօնաւորն շաքարեմ տօնուած թեոդորոս զինաւորն Ամասիացի, (ի Սաքունէ զիւղէ), որ էր ի կարգէ երկրաստորդ եռանդուն զօրակաւնաց, որք յունարէն շարժ կոչուէին, նոյն նշանակութեամբ: Սա՛ որ մի ձի հեծած՝ իր հայրենեաց մօտ Եւփրատու կոչուած աւանը երթալով՝ ամառ ատեն, կ'իջնէ ծառոց ներքեւ հանգչելու. տեղւոյն տիկինն Եւսեբիա, տեսնելով կանչէ որ հեռանայ այն տեղէն, վասն զի մեծ վիշապ ոճ մի կայ մօտերը. թէոդորոսն լախ կ'ելնէ և վիշապը կու շամիրէ իր նիզակովը. այսպէս նկարեն իր պատկերը: Քրիստոնէութիւնն հռչակուելով կու դատուի, և երբ համարձակելով կ'այլէ Ռեա դիցուէւոյ կուտունը, դատապարտուի, և ի կրակ ձգուելով նախատակուի. նշխարքները ժողովելով Եւսեբիա՝ թողէ իր ազարակին մէջ, ուր յետոյ շինուի մեծ եկեղեցի: Ս. Գր. Նիւսացի պերճաբան ներքող մի գրած է ի պատիւ Սրբոյս, որոյ վկայութեան օրն գրուած է ի 17 փերրուարի. Իսկ հին վկայարանու թիւն Սրբոյս՝ թուի յարմարեալ կամ թարգմանեալ շատ վաղուց, և գոնէ սկիզբն՝ ուր Ամասիոյ քաղաքին նկարագրութիւնն կ'ըլլայ՝ զուտ Խորենացւոյ զրէնէն թափուած է:

Քիչ ժամանակ վերջ սոյն Ամասիոյ մէջ նախատակուած են մեր զօրականին հօրքեւորդերն Ս. Եւստռուպիոս և Ս. Կրեոնա կամ Կրեոնիկոս, և քեռորդին (ըստ ոմանց եղբորորդի) Բասիլիսկոս: Սա՛ ըստ ոմանց բանտին մէջ վախճանած է. բայց աւելի հաւանական է՝ որ ըստ աղաչանաց Ստրուտոյ և ի մարդկանէ, բանտէն հանուելով քշուեր է ի Կո-

նստա Հայոց, և հօն նախատակուեր՝ գլխու տուելով: Յիշատակուի ի 22 մայիսի: Ոմանք զսա՛ եկեղեցական կարծեն՝ շիթելով համաւնուն Անկիւրիոյ եպիսկոպոսին հետ՝ Իսկ միւսք՝ իրենց հօր ազգականին նման կոող բազինները կործանած են, երբ դատաւորն տարեր է զանոնք՝ կարծելով թէ խուսկ մահ տուցանեն: շատ տեսակ տանջանքներ կրելով, երբեմն հրաշքով ազատելով և իրենց տեղ դահիճներն պատժուելով, յետոյ խաչերու վրայ գամուած պաւկուած են: Երեքին մարմիններն Ամասիոյ մօտերը այլեւայլ տեղ թողեր են քրիստոնէայք. յիշատակին դրուած է ի մարտի 3: — Միւս քեռորդի մի մեր Ս. Ամասիացւոյն և իրեն պէս հռչակեալ նա՛ և անուանակից և տեղակից է՝ Ս. Թեոդորոս ստրատելատն, յառաջագէմ ի զինուորութեան պատուի. սա իրրեւ 13 տարի իր քեռիէն վերջը (319) նախատակուեր է ի լիտի Լիկինիոսէ, Վամբաց Հերակլիա քաղաքում, որոյ համար Սալիկացի կոչուի: ուր՝ կոող անդրինները կոտորելուն համար՝ բռնաւաւորն ի խաչ հանել տուաւ զնա և նետու հար ընել. բայց երբ լսեց ժողովրդեան շշուէն իրեն գէմ, իջեցնել տուաւ, և զաղտուկ զինասել ի բանտին: Ասոր յիշատակն այլ կատարուի յ'7 կամ 8 փերրուարի ի Յունաց և Լատինաց, ըստ մեր Յայրամաւորաց յ'8 յունիսի:

ՅԱմասիա վկայելոց մէջ խոստովանող մի եւս նշանաւոր և ողբերգական յիշատակ մի ունի, յիշեալ կայսեր պատճառաւ, զոր Խորենացին (Բ, 2Ը) այս՝ առթիւ՝ ցանկանէր գաղտնի աչեւոր կ'անուանէ. վասն զի իր կիւնը Վալերիա՝ Գիսկիւտի դուստրն երեսն թողած, (զոր յետոյ Պրիսկա մօրն հետ ծովախեղդ ըրաւ), անոր Գրափիւռա նախաւը կ'ուզէր առնուլ. նա ճար գտաւ փախչելու մինչեւ յԱմասիա. որոյ եպիսկոպոսն Բասիլիոս պաշտպանեց զնա, որոյ համար և նախատակեցաւ պանեց զնա, որոյ համար և նախատակեցաւ (319, մարտ 28). յաջորդ տարին (13 յունուարի), մեռեր է Գլափիւռա:

Ի սկզբան հարածանաց համարուի եղած Ս. Արաւազիկէի նախատակութիւնն՝ ի Սեբաստիա, յԱզրիկողայոսէ. ոմանք ի միոցոյ՝ քեռի կոչեն զսա՛ մեր Ս. Գր. Լուսաւորդի. բայց, ինչպէս առաջ յիշեցինք երկու Աթա-

նադիներանց, անձինքն, դորձքն և նախատա-
կութիւնք շփոթուած են ուղղուն կրօնայ քննել
նա և յԱզգերեան Վարս Արքայ (Հատ. Գ. էջ
319-360) Ժ ծանօթագրւն և մեղի մերձա-
ւոր իր Թեոդոսիոսն աշակերտաւն նախատա-
կութեամբ է ի Փիլաքքոսի, Փնալաճոյն որ ըստ
վիճակագրութեան լէոնի Իմաստասէր կայ-
սեր, Հայոց կամ Հայկական գաւառի կամ ե-
պարքոսութեան մէջ էր Գիշատակ Արքայ
գրուած է ի 17 յուլիոսի: — Ի Սերաստիա
նախատակելոց մէջ այդ Ագրիկոլայոսի Հա-
լածանաց տարիներում, մեծազնայի է ան-
ամենայն եկեղեցիս, Ս. եպիսկոպոսն Վլաս.
զոր երբ տանջած և արիւնթաթախ ի բանա-
խաւերէր, եօթն դթալից կանայք արեան կա-
թիլները սրբէին, որոյ համար իրմէ առաջ
նախատակեցան կրակի մէջ. իսկ Սոբրն
ձգուեցաւ Սերաստիոյ անուանի լըճին մէջ,
ուսկից հրաշքով ջրոց վրայ քալելով դուրս
ելաւ, և զխաւամար կատարեցաւ: Տօնուի
յ՝ 3 վերրուարի կամ քանի մի օր վերջը:
Սերաստիոյ լըճին անունն յափշտակէ զմիտն
ի հանդէս աշխարհաշուկ նախատակութեան
Քառասուն (Մանկանց) վկայից զօրակնոց,
որոց ամենուն այլ անուններ նշանակած են
պատմիչք և ներքողիչք, և ոչ սակաւ են զո-
վարանքն ի Գունաց, Լատինաց, նա և ի մե-
րոցս, թէ թարգմանութեամբ և թէ այլեւայլ
յիշատակօք, որոց մէջ արժանի են յիշատա-
կութեան և գովութեան և զարդի եկեղեցւոյ
մերոյ իրենց նուիրեալ գեղեցիկ Շարականքն
Հալածանաց երկրորդ և երրորդ անգամ
բորբոքած ատեն եղած է ասոնց նախատա-
կութիւնն, յամի 320. տօնուին յՊ մարտի,
Քառասուն Մանկանք Սերաստիոյ կոչմամբ:
մինչեւ հիմայ տեղացի քրիստոնեայք ցուցը-
մենք ան յատակ մի ի դաշտի, ուր նա-
նեն ցամքած յատակ մի ի դաշտի, ուր նա-
հատակէն « Ի Սերաստիայ Ծովուն գծովա-
հատակէն » « Ծովի կենցաղոյս լուծին զվտանգ: (ուր և) »
« Բրիտանոսաձիր երկնաւատ հառազայթիւք »
« տապանայր ծովն սառնապատ լըճին, վասն »
« զի պատուական արեանցն հեղով զկա-
« պուտակ զծովն վարդադոյն ներկէր »: երգէ
մեր Շարականն:

Հոչակաւոր նախատակ մի եւս է աղնու-
կունն Ս. Սեւերիանոս Սերաստացի, (9 կամ
13 սեպտեմբ.): — Զատ յայլոց վկայից ի Սե-

րաստիա նախատակուած յիշուին մեծ հալա-
ծանաց ատեն և երկու ընկերք, որք իրենց
անուանց նմանութեամբ (ըստ յոյն գրողաց)
թուին Հայք. մին Տիգրան որ թուի Տիգրան,
միւսն Արիոն Գիշատակութիւն ի 22 մարտի:
Ի իկիւնիոսի ինքնակալութեան ատեն այլ ի
Սերաստիա նախատակուած են բազմաթիւ
վկայք ի կրակ ձգուելով: որոց զխաւորքն
կոչին Կարտեռ, Եդոքսիոս, Անտիկ, Ստի-
րակ, Աղապիս, և այլն: յորոց ամենց անուններն
մօտ են հայերէնի: յիշատակուին յ՝ 2 նոյեմ-
բերի: — Սոյնպէս այս քաղքիւ մէջ հալա-
ծանաց սկզբուս նախատակուած է Ալիակ ռմն
և քուրմ մի (Herenarque), խաղաղապետ
կոչուած, որոց յիշատակն գրուած է ի 28
նոյեմբերի:

Ոչ պակաս քան ի Սերաստիա այլ զուցէ
և աւելի նախատակ ընծայեր է Գ. Հայոց
մայրաքաղաքն Մելիտիսէ այս հալածանաց
ատեն, Լիւսիմախ և իր արբանեկաց ձեռք:
և ի սկզբան անդ (304) հաղարկով երբ Ե-
դոքսիոս զօրավար հռովմայեցի հօն աքսո-
րեցաւ իր ամբաստանողն Հոսիլոս այլ հա-
ւատաց ի Բրիտանոս, այն ատեն Զենոն կտրիճ
զօրական մի եւս համարձակ հոչակելով քրի-
տոնական հաւատքը իրեն հետեւցուց ամբողջ
զուրդ մի ոչ պակաս քան 1104 անձինք, որք
յետ պէսպէս տանջանաց սրով կոտորեցան,
և յիշատակուին ի 6 կամ ի 11 սեպտեմբերի:

Քանի մի անգամ յիշուած ըլլալով հա-
ղարաւոր զուրդ զուրդ վկայից նախատա-
կութիւն ի Մելիտիսէ, կընար կասկածուիլ
որ շփոթութիւն մ'ըլլայ պատմութեան, սա-
կայն պարսպանքն և Ժամանակն այլեւայլ
են. կարեւոր գիտելի այլ է, որ այդ քաղաքն
մեծ զինուորանիստ տեղ մ'էր, ուր միշտ
բազմութիւն զօրաց կեճար, և այս ատեններս
շատ աւելցած էին քրիստոնեայք, մինչեւ ամ-
բողջ խումբեր կազմէին: (252 թու. 444)

Ս. Փոքր Հայոց երկու մայրաքաղաքներ
էն վար չէր կըրնար ըլլալ Ս. Հայոց աւելի
նշանաւոր մայրաքաղաքն, Կեսարիա, որ և
հին Գամրայ և Կապադոկիոյ, ինչպէս ե-
կեղեցական բարձրագոյն գրեթէ ինքնաշուքի
աթոռոց մէկն էր, տրեամբ վկայից այլ
պայծառացած ի սկզբան այս Բիւզնդիոսեան

հալածանաց, սխրալի նահապետակ մի ընծայեց (304 կամ 306)՝ զկոյսն Գործարեւն՝ որոյ չաւ տեր ցանկրային՝ բայց ինքն իմաստուն կու գանաց նման զՔրիստոս ընտրեց իւնայ։ Սա սրբիկ անուամբ անգուլի գործաւոր մի՝ յետ յորդորանաց՝ լինեցընելու համար ի կախաղան հանել առաւ կոյսն փութացընէր զինքն որ ժամ մի առաջ երթամ, կ'ըսէր, ի դրախտն Աստուծոյ։ Սա սրբիկ աւելի չար հնարք մի մտածեց կոյսը մտրեցընելու, երկու ուրացեալ կանանց՝ յանձնեց ընելիլը։ Բայց անոնք աւսոր խօսքերը լսելով՝ զզջացան իրենց ուրախ ցոթեան յիշայ, և դատապարտուեցան իրանքու կապուած կոնիակ կռնակի կրակ ձգուելով, ուր և կուսին քաջապետութեամբ զօրացած՝ ողակիղեցան։ Իսկ զսա՝ Ստորիկ չաւ շարքաբեւտուաւ կախուած ձեռքելով, մարմինը պատրոտելով և ջահեղով ուրեղով, վերջապէս գլխատելով։ Կոյսն բարձր ձայնով փառք կու տար Քրիստոսին՝ որ պիտի ընդունէր զինքն ի դրախտն։ Չայնը լսելով դատաւորին պաշտօնէից մէկին՝ Թեոփիլոս անուամբ, ծաղրելով ըստւ կուսին, երբ երթաս ի դրախտն՝ անոր ծաղիկներէն և պտուղներէն խաւրէ ինձի։ Կոյսն այլ խոստացաւ, և անվախ ի ծառն իջնալով, զխառնեցուց։ Երբ Թեոփիլոս գեռ ծածղելով ըսածը և լսածը պատմէր, երկուստարք մի եկաւ քովը, և ի կողմանէ Դորոթեայ ընծայեց անուշահաւ վարդեր, և գեղեցիկ խնձորներ, գարմացաւ Թեոփիլոս, և հասկըցաւ որ հրաք է այդ վառ զի ծաղկանց և պտղաց եղանակ ձեր (սիրերուար ամեռն սկիզբն)։ Հաւատաց ի Քրիստոս, դատեցաւ ու տանջեցաւ՝ կողերը երկաթի ճանկերով, և զլիւսութեամբ նահատակեցաւ։ Դորոթեայ տօնուի ի 6 փերբուարի։ — Այս մեծ հալածանաց նորէն նորագուած առնն՝ Լիկինիոսի գրգումմբ, նահատակուած է ի Կեսարիա, (իբր յամի 320) մեր եկեղեցւոյ մէջ այլ ասունուած զօրականն կամ զօրապետ Ս. Գորդիոս կամ Գորդիանոս՝ որ զգուելով ի կոնպաշտից և անոնց պաշտպաններէն, թողոց զինաւորութիւնը և քաշուեցաւ յաւանձնութիւն բայց երբ լսեց որ հեթանոսական մեծ հանդէս և խաղը կուտարուին ի քաղաքին և թոյլ քրիստոնեայք այլ կ'երթան տեսնելու, իջաւ ի հրապարակ, յանդիմանեց զամենքն

այլ՝ հրեղերձ դատաւորացն յորմէ և դատաւորացն քրիստոնեական և զինուորական խառնութեամբ նահատակեցաւ և յիշատակն կառարի յ'3 յանուարի։ Ս. Բարսեղ եկեղեցի մի կանգնած է յանուան Սրբոյն և հոխարան ճառիս ներքոյն։ Այս տունն ի վայրէն Պալիսիոսի զիկտոր և Դոնատի 21 մայիսի։ Հոջակաւոր նահատակ մ'այլ Կեսարիոյ է Ս. Չիւնարոն Երեկիւնիոս յիշատակն ի նոյնմը։ 25 յունիս 311 թուականին Յիշակ մայրաքաղաքներէս զսա՝ բուն Մեծ Հայոց աւելի մասիկ ուղիւնայ քաղաքաց մէջ այլ նահատակներ եղած են որոց ամենց հայ զլլայն անապատիցս է Երայիսի են Ս. Եւստատիոս և ընկերքն՝ զինէ ոմանք ինքն ըստ ազգայնոց աշտնութեան Յուսիկ կոչուէր և ազնուական ցեղէն էր։ Հայրենեւթ յԱրաշիակ կամ Արորակ քաղաքէ։ Բարձր Հայոց սահմանակից գուսուի։ Սա ինքնին յայտնեց իր քաջաւատ քրիստոնեութիւնը և յայն յառաջ յիշակ երկու անգործ կուսակազներէն (Ալիսիոս և Ալքիկողայոս) գատուելով այլեւայլ տեղ երկուքէ կոչիկներ յոտներն գամուած քաշեցաւ և ի կրակ ձգուելով ողակիղեցաւ։ Երթալու տանն Մարդար անուամբ Արորակցի գեղջուկ մի որ այն ժամ իր խրճիթին ծածքը կը շինէր, տեսնելով զնա փութացաւ իջաւ և ետեւէն վազելով Ես այլ հետք կու գամ, տէր իմ կանչէր ևս այլ քրիստոնեայ եմ և չարաչար տանջուելով, կրակած չամբուելով խօցուելով, ոտուրներէն ծակուած և կախուած նահատակեցաւ։ Քահանայ մի ևս Օքսենոս անուն, գլխատմամբ ընկերացաւ Սրբոց նոյնպէս և Եղեմիոս անուամբ մէկն (գողցէ հայերէն Պատուական կամ Ագնի կոչուած ըս լայ), որ սիրով Եւստատիոսի կտեւէն գնաց և ջարդուելով կտրատուելով նահատակեցաւ։ Հինգերորդ ընկեր մ'այլ Սրբոց եղաւ երկուստարեւ Ուրեւսեա, որ նետաձգութեամբ լաղի առնէ երբ ուժով արձակեց կուրծքէն կախած խաղը զգետտէն զօրու եղնելով իմա

մայիսի 21 թուականին Յիշակ մայրաքաղաքներէս զսա՝ բուն Մեծ Հայոց աւելի մասիկ ուղիւնայ քաղաքաց մէջ այլ նահատակներ եղած են որոց ամենց հայ զլլայն անապատիցս է Երայիսի են Ս. Եւստատիոս և ընկերքն՝ զինէ ոմանք ինքն ըստ ազգայնոց աշտնութեան Յուսիկ կոչուէր և ազնուական ցեղէն էր։ Հայրենեւթ յԱրաշիակ կամ Արորակ քաղաքէ։ Բարձր Հայոց սահմանակից գուսուի։ Սա ինքնին յայտնեց իր քաջաւատ քրիստոնեութիւնը և յայն յառաջ յիշակ երկու անգործ կուսակազներէն (Ալիսիոս և Ալքիկողայոս) գատուելով այլեւայլ տեղ երկուքէ կոչիկներ յոտներն գամուած քաշեցաւ և ի կրակ ձգուելով ողակիղեցաւ։ Երթալու տանն Մարդար անուամբ Արորակցի գեղջուկ մի որ այն ժամ իր խրճիթին ծածքը կը շինէր, տեսնելով զնա փութացաւ իջաւ և ետեւէն վազելով Ես այլ հետք կու գամ, տէր իմ կանչէր ևս այլ քրիստոնեայ եմ և չարաչար տանջուելով, կրակած չամբուելով խօցուելով, ոտուրներէն ծակուած և կախուած նահատակեցաւ։ Քահանայ մի ևս Օքսենոս անուն, գլխատմամբ ընկերացաւ Սրբոց նոյնպէս և Եղեմիոս անուամբ մէկն (գողցէ հայերէն Պատուական կամ Ագնի կոչուած ըս լայ), որ սիրով Եւստատիոսի կտեւէն գնաց և ջարդուելով կտրատուելով նահատակեցաւ։ Հինգերորդ ընկեր մ'այլ Սրբոց եղաւ երկուստարեւ Ուրեւսեա, որ նետաձգութեամբ լաղի առնէ երբ ուժով արձակեց կուրծքէն կախած խաղը զգետտէն զօրու եղնելով իմա

ցուեցաւ քրիստոնէութիւնն, և կրակ կարած
աւանջանարանի վրայ տարածուելով նահա-
տակեցաւ: Յանուն իրենց աղնուական ար-
քով: Եւստասախոսեանք կոչուելով տունամբին
Սուրբքս, յ'13 զեկտ. ամսոյ զեղեցիկ Վկա-
յարանութիւն մ'այլ թարգմանած են մեր
նախնի հարք ի յունարէնէ, յորում կ'ըսուի
որ թէ քահանայն Օքսենտ և թէ Եւստաս-
տիոս կաակաւ պատուիրեցին որ զիրենք
թաղեն յԱբորակ. յետինս նա և կտակեց
որ իր ստացուածքն երեք մաս բաժնելով ասն
աղքատաց, եկեղեցւոյ և իր քրոջ: Վկայած
են յամին 305: Մեր եկեղեցին այլ նուիրած
է և երգէ ամէն տարի իրենց տօնին՝ հինգ
տուն անուշիկ Շարախանը:

Ասն կողմերու հայտնակ Արարիսու ա-
նուամբ քաղաքն այլ յամի 309 ընծայած է
կեսար նահատակը, որոյ յիշատակն դրուած
է ի 28 զեկտ: Ուրիշ է սա ի Կեսարիա նա-
հատակուած Կեսարիէն, որ յիշուի յ'3 նոյեմբ:
Նիկիտայօլիս Հայոց քաղաքն այլ ինչպէս ա-
ռաջին հալածանաց տանն, այս ետքի մեծ
հալածանացս այլ ընծայած է սուրբ նահա-
տակներ. որպէս, Ղեւոնդ և Մաշիկ, յամի
318 կամ 320. շատ ընկերներով, ծանօթ
Լիւսիասին հրամանաւ. ասոնց յիշատակն
դրուած է ի 10 յուլիսի: — Երկրորդ օրն
այլ (11 յուլ.) յիշատակուին Յանուար (Ja-
nuarius) որ չորս օր շարաշար տանջուեցաւ,
երկաթէ ճանկերով պատըռուուելով և խա-
րուկուելով, և Պեղագիս վկայուհի մի. ասոնք
հալածանաց սկիզբներուն նահատակուած են
այս յատուկ Հայոց քաղաք կոչուածին մէջ:
Շարաշարեղի 2. 1. 4. Բ. ԱԼԻՇԱՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԲԱԳԵՆ կամ ՊԻԹԼԻՉ, ԳԶ. BETLIS. Թ.
بیتلیس — Գեղեցկառեսիւի վանդաւաշահ
և անուանի քաղաք Աղձնեաց Սալնոյ ձոր
պառառի մէջ: Թափն մակերեսութիւն 4837

մետրաշարի լայրձք է, կըլ գտնուի Վանայ ծո-
լիսի արեւմտեան հանրապետին կողմը, զրեթէ
5 ժամ հեռու, և Մշոյ հարաւային արեւ-
ելեան կողմը: Ժամ հիտաւորութեամբ: Մեր
հին պատմիչները իննկերով զարէն անաջ
չեն յիշել քաղաքիս անունն: Կոնստանտին
իւստինիանով Սեբաստիան կը յիշէ զայն՝ Սիսե-
լով շահաւան: Իսկ Վարդան անշուրհաւ
զիրը Բաղէշը կը դնէ Տուրուքերանի: Բոնու-
նեաց զաւառի մէջ: Բաղաքիս անունն ա-
ւելի ստեղծ կը յիշուի վերջին պարսիւ հե-
ղինակովմանց և զրոյց յիշատակարանաց
մէջ, և մինչեւ անգամ Եպիսկոպոսաւիստ
քաղաք կոչուած է, որոյց յայտնի չէ թէ
երբ սկսած և հաստատուած է: Կայ տեղ
եպիսկոպոսական աթոռ: Անցեալ պարսերու
մէջ յիշուած Բաղէշու անաշուրդներէն յայտ-
նի են ամեն: Մետրոպօլիտայեան 4685
թուին Սեւոթի վարդապետ, Ստեփանոս Թ-
պիսկոպոս, և այլն: Բաղէշ անուան ծագման
համար անանգութեամբ հետեւեալը կը պատ-
մուի: մէկու մը էշը որ բնակաց կաթմերով
ցուրտին ամենապիմացկուն կենդանին է,
ձմեռը Չիֆթան կոչուած ձորին անցած ժա-
մանակ ձենաց մէջ խրելով սառել կամ պա-
ղեր է: և այդ պատճառն տեղը կոչուել է
Պաղէշ, որ յետոյ իբր թէ, աղաւաղած և
եղած է: Բաղէշ քաղաքը կը միջին ժոյճ

Կապուցուած է մասամբ ձորերու մէջ և
մասամբ լեռանց ապառաճներու վրայ, և ա-
մեն կողմէն շրջապատած լինելով բաղմաթիւ
ձորերով և զիւրարամաշիկ լեռներով հրա-
շալի և նկարչական զուարճալի զիրը մ'ու-
նի: Չորս ձոր արեւելքէն, յարեամտից, հիւ-
սիսէ և հարուէն երկնայալ կը միանան քա-
ղաքին մէջ. ասոնքն երեք ձորերու մէջն
կը վազեն հետեւեալ վտակներն: Աւսպ կամ
Հաւսպ ջուր, Աշեխու ջուր, Թոցերու կամ
Թոյնարու ջուր: որ քրդերէն Անիտօր-Մադը
կը կոչուի: Այս վտակները իրենց անուննե-
րը անած են նոյնանուն գիւղերէն. քաղա-
քին Բաղէշ ջուր կամ Ապի-Պիքիգ գե-
տակը որ վազելով հարաւային ձորի մէջն,
և մի քիչ քեպի արեւմուտք շրջան ընելէ
վերջ, տեղակի գետի հարստ կ'ընթանայ ընդ